

ՀԱՅԿԱՆԻ ԽԾՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻԾԵՐԻՈՑ
ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՔԻՆԵՏ

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԶԵՌԱՑՄԱԳԻՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

02
Բ-12

ՀԵՍՏ ԼՈՒԺՈՂՎՈՐԾՄԱՑԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

02

F-12

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԶԵՐԱՑԱԳԻՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԽՍՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏԻ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵԿԱՆ

1939

Ա Ր Ա Զ Ա Բ Ա Ն

Տասնյակ տարիներ ե ինչ գոյություն ունի լատինական գրեզի համար հատուկ դրադարանային ձեռացաղիր և դործ և ածվում Ամերիկայի, Յեվրոպայի, ինչպես նաև Խորհրդային Միության դրադարաններում։ Վաղուց արդեն մշակվել ե նույնպես ոռուերեն դրադարանային ձեռացաղիրը և կիրառվում է Խորհրդային Միության դրադարանային պրակտիկայում։ Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում, չնայած վոր դրադարանային գործը բավականին լայն ծավալ ե ընդունել և քաղաքական-կուլտուրական ճակատի կարևորագույն ողակներից մեկն ե հանդիսանում, այնուամենայնիվ մինչև հիմա գոյություն չունի հայերեն դրադարանային հատուկ ձեռացաղիր, վորն այնքան անհրաժեշտ ե մեր դրադարանների կատալոգների արտաքին տեսքը լավացնելու ու նրանց ոգտագործումը հեշտացնելու համար։ Մեր դրադարաններում կարելի յե հանդիպել այնքան ձեռացաղիրով գրված քարտերի, վորքան դրադարաններ գոյություն ունեն և վորքան մարդիկ աշխատել են այդ կատալոգների վրա։ Ինչ խոսք, վոր այս հանգամանքը խոչոր չափով անդրադառնում ե դրադարանների կատալոգների արտաքին տեսքի, հետևապես և սպասարկման աշխատանքների վրա ընդհանրապես։ Դրադարանային ձեռացաղիրի այս ձեռնարկի նպատակն ե վերացնել այս բացը մեր դրադարանային պրակտիկայից։

Պետք ե ասել, վոր հայկական դրադարանների համար հատուկ դրադարանային ձեռացաղիր մշակելն այնքան ել դյուրին ու հեշտ գործ չեր։ Հայտնի յե, վոր հայերեն դրերի տառատեսակները վորով չափով աղքատ են և բացի այդ մեր դրերը իրենց արտաքին տեսքով այնքան ել պարզ ձե չունեն։ Մեզ մնում եր միայն ընտրություն կատարել յեղած տառատեսակների մեջ և ընտրել համեմատարար ավելի պարզ և գեղեցիկ տառատեսակը ու դրա հիման վրա յել մշակել դրադարանային ձեռացաղիր։



3757

39

01 MAR 2013

Հայերեն գրադարանային ձեռացագիր մշակելու համար հիմք ընդունեցինք մեր գործածական բոլոր գրերից Արամյան կոչված գրերը, վորոնք ավելի պարզ են և ուղղահայաց գիրք ունեն, քանի մեր մյուս բոլոր գրերը: Բացի դրանից այլ գրերը իրենց արտաքին տեսքով բավականին մոտենում են լատինական պարզ ու գեղեցիկ գրերին: Գրադարանային ձեռացագիրը մշակելիս ուղագործել ենք լատինական և ռուսական գրադարանային ձեռացագրերի սկզբունքները, նրանց փորձը և գրելու յեղանակները¹⁾:

Գրադարանային ձեռացագրի մեր այս ձեռնարկը քննության և առնվել ՀԽՍՀ Լուսժողկոմատի Գրադարանային վարչության կողմից հարավիրած Յերևան քաղաքի գրադարանավարների խորհրդակցությունում:

Լույս ընծայմելով գրադարանային ձեռացագրի մեր այս ձեռնարկը չենք կարծում, վոր այն վերջանական է: Հայտնի յէ, վոր ոռւսերեն գրադարանային ձեռացագիրը, չնայած վոր, ինչպես ասեցինք, վաղուց ե մշակվել և կիրառվում ե գրադարաններում, շարունակ ճշտվում և կատարելագործվում ե գրադարանային պրակտիկայում: Անդամ այդ ձեռնարկի վերջին՝ 1937 թ. հրատարակությունը լույս է տեսել նոր լրացումներով ու ճշտումներով: Կարծում ենք, վոր հայկական գրադարանների համար մշակված գրադարանային մեր այս ձեռացագիրը կիրառելով գրադարանային պրակտիկայում, հետագայում նույնպես ավելի ևս կհնարին կվերացվեն այն թերությունները, վոր կարող է ունենալ այն:

Ա. Բ.

1) Մասնավորապես սպովել ենք՝ Գրիգորյեա, Յ. Վ. Բիблиոթեկայի պոչեր. Մ. 1937 թ. ձեռնարկից:

ԻՆՉ Ե ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԶԵՌԱՑԱԳԻՐԸ

Գրադարանային կատալոգի (գրացուցակ) առաջ դրված խնդիրներից մեկն այն է, վոր նա արտաքնապես լինի պարզ, գեղեցիկ և, վոր գլխավորն է, դյուրընթեռնելի: Ապացուցված է, վոր մի քանի տարբեր ձեռացագրերով գրված, վոչ պարզ, դժվար ընթեռնելի քարտերից կազմված կատալոգը վոչ միայն չի գրավում ընթերցողին և շատ շուտ հոգնեցնում է նրան, այլև դժվարացնում է կատալոգից ոգտվելն ընդհանրապես: Այսինչ, հայտնի յէ, վոր կատալոգը ընթերցողի համար հանդիսանում է այն գլխավոր միջոցներից մեկը, վորով կարողանում է նա իմանալ թե ինչ գրքեր կան գրադարանում: Ուստի գրադարանը խույր ուշագրություն պետք է դարձնի կատալոգների արտաքին տեսքի վրա և առաջին հերթին լավացնի քարտերի արտաքին տեսքը, վորոնցից կազմվում են գրադարանի կատալոգները:

Կատալոգի արտաքին տեսքը լավացնելու համար ամենահիմնական միջոցը տպագրված քարտերի կիրառումն է կատալոգում, վորը չնորհիվ տպարանական տառերի պարզության, դյուրընթեռնելիության և միաձնության, կատալոգին տալիս է բավականին հաճելի տեսք: Յերկրորդ միջոցը՝ մեքենագրված քարտերի կիրառումն է, վորն ավելի պարզ է և դյուրընթեռնելի, քան ձեռքով գրված քարտերը: Մեր գաղաքանական համարանիշություն չունեն իրենց ամբողջ գրքային ֆոնդի համար ոգտագործել տպագրված քարտեր: Նախ, վոր ՀԽՍՀ Պետրապալատը պատրաստում է տպագրված քարտեր միայն ընթացիկ գրականության համար, այն ել 1930 թվից սկսած և յերկրորդ՝ Գրապալատը տպագրված քարտեր պատրաստում է գերազանցապես դիտական գրադարանների համար՝ նրանց պահանջներին համապատասխան: Մասնավորապես պահանջներն ամբողջապես, ինչպես և գիտական գրադարաններն իրենց գրականության մեծ մասը (1930 թ. առաջ յեղած գրականության համար) պետք է նկարագրեն ձեռագրով կամ գրամեքենայի միջոցով: Անդամ Ամերիկայի և Յելլուսպայի գրադարանային պրակտիկայում, վորտեղ շատ վաղուց ե ինչ կիրառվում են տպագրված կամ մեքենագրված քարտեր, այ-

նուամենայնիվ, այդտեղ ևս, շատ հաճախ, դրբերի նկարագրությունը կտարարվում է ձեռացրով:

Այս այն գեղքում, յերբ զրադարանում դրբերի քարտը պետք է գրել ձեռագրով, ապա այն գրվում է հատուկ, այսպես առաջ գրադարանային ձեռացագրով (նիմունության ուժում):

Գրադարանային ձեռացագրի գյուտը կապված է հանրահաչակ Եղիսոնի անվան հետ: Եղիսոնը զրությունը հեռագրային դորձի ասպարիզում կիրառելու համար յերկար փորձերից հետո յեկել է այն յեզրակացության, վոր առանձին տառերով գրված գրությունը տալիս է ամենապարզ և արագ ձեռացագրեր: Եղիսոնի այդ յեզրակացության հիման վրա ամերիկացի հայոնի գրադարանագետ Մելվիլ Դյուին վերցնելով նրա գյուտի հիմնական այդ սկզբունքը գետես 19-րդ դարի 80-ական թվականներին մշակում է գրադարանների համար հատուկ գրադարանային ձեռացագրի:

Գրադարանային ձեռացագրի տառերը և թվերը գրվում են անջատակի, բաժան բաժան, ունեն ուղղահայաց դիրք, զերծ են զարդարանքներից և ավելորդ գծիկներից: Գրադարանային ձեռացագրի տառերը իրենց արտաքին տեսքով բավականին մոտ են տպագիր տառերին, բայց սխալ կլինի իհարկե նույնացվեն գրադարանային ձեռացագրի տառերը տպարանական տառերին: Կան գրադարանային ձեռացագրի մի շարք տառեր, վորոնց արտաքին տեսքը տարբերվում է տպարանական տառերից (տես նկ. 1):

ՀԿ31	Ասուլին, Ի.
Ս 90	ԼԵՆԻՆԻԿԱՄԻ հարցերը: Թարգ. ոռուստեա 10-րդ հրատ 2-րդ հրա. ռ. Յեր Կուսիրատ: 1937.
	761 Եջ 24 սմ.

Նկ. 1. Կատալոգային քարտ, գրված գրադարանային ձեռացագրով (փոքրաց.)

Գրադարանային ձեռացագրի հիմնական նշանակությունը այն է, վոր միանելություն է մտցնում տարբեր մարդկանց կողմից գրված քարտերի մեջ, պարզ ու դյուրինքենների յե ընթերցադների համար, գրվում է արագ, հեշտությամբ յուրացվում է աշխատակիցների կողմից և այդպիսի քարտերից կազմված կատալոգը արտաքինապես գեղեցիկ է ու գրավիչ:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՁԵՌԱՑԱԳՐՈՎ ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գրադարանային ձեռացագրով գրելու համար գրադարանավարից առանձին ընդունակություններ չեն պահանջվում: Այդ ձեռացագրով գրել կարող է յուրաքանչյուր գրադարանավար: Պետք է միայն վոր գրադարանավարը ձեռք բերի պրակտիկա, վարժվի գրադարանային ձեռացագրով գրելու յեղանակներին: Գրադարանային ձեռացագրին վարժվելու համար նախորոք փորձեր պետք է կատարել հատուկ, այսպես ասած միլիմետրացանց (միլիմետրովկա) թղթի վրա: Անհրաժեշտ է, վոր այդ թղթի վրա վարժությունները կատարվեն յուրաքանչյուր տառի նկատմամբ առանձին առանձին, յուրաքանչյուր տառը կամ թվանշանը գրվի բալոր դեպքերում միևնույն յեղանակով և ձևով, խիստ կերպով պահպանվեն տառերի չափուրը, տառերի ու բառերի հեռավորությունները կատարելուց հետո գրադարանավարը վարժություններ պետք է կատարի քարտերի վրա: Այդ վարժությունների ընթացքում, յերբ գրադարանավարը համոզվում է, վոր արդեն տիրապետել է գրադարանային ձեռացագրով գրելու տեխնիկային անցնում է գրեթերի նկարագրությանը այդ ձեռացագրով:

Գրադարանավարը կատարելով աշխատանքի կազմակերպման և գրադարանային ձեռացագրով գրելու համար պահանջվող ներքոհիշյալ կանոններն ու պայմանները հեշտությամբ կարող են յուրացնել գրադարանային ձեռացագրի տեխնիկան, այդ ձեռացագրի կիրառման հետևանքով ել իր գրադարանում կունենա գրավիչ, գյուրընթեռների կատալոգներ:

1. Գրադարանային ձեռացագրով գրելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, վոր գրադարանավարը նստած լինի վորքն կարելի յե ուղղահայաց դիրքով, առանց կուրծքը հենելու սե-

դանին։ Զեռքերը մինչև արմունկները ամբողջապես պետք ե լինեն գրասեղանի վրա, ընդ վորում ձախ ձեռքը պետք ե թեթև կերպով հպիվ կրծքին, իսկ աշ ձեռքը մոտավորապես զուղահեռ ուղղությամբ լինի աշ ուսին։

2. Միլիմետրացանցը, հետազայում և գրքի քարտը դրասեղանի վրա դրված պետք ե լինի գրողի ուղիղ աչքերի դիմաց, ուղղահայաց դիրքով, այնպես վոր քարտի ներքեւի հորիզոնական դիմքը զուղահեռ լինի դրասեղանի յեղերքին։

3. Տառերը պետք ե գրել պարզ, առանց ավելորդ գծիկների և դարդարանքների։ Զեր տեսակետից վոչ մի տարբերություն չպետք ե լինի միենույն տառերի գրության միջև։

4. Խստորեն պետք ե հետեւել, վոր պահպանվի տառերի ուղղահայաց դիրքը։ Զի թույատրվում նվազադույն չափով թեքում։

5. Պետք ե դրել այնպիս, վոր բոլոր տառերի գծերը միենույն հաստությունն ունենան։ Զպետք ե գրչածայրի հպումը ուժեղացնել և թուլացնել, վորի հետեւանքով տառի գծերը վորոշ տեղերում ուժեղանում և թուլանում են։

Բավական չեն վերոհիշյալ կանոնների կիրառումը։ Գրադարանային ձեռացագրի լավորակության համար խոշոր նշանակություն ունեն գրության գործիքները և աշխատանքի կազմակերպումն ընդհանրապիս։ Այս տեսակետից կարեոր նշանակություն ունեն գործածվող թանաքը, գրչակոթը, գրչածայրը, անդամ թանաքամանը։

1. Պետք ե գործածել լավորակ թանաք։ Պահանջվում է, վոր թանաքը ունենա այնպիսի վորակ, վոր գրելուց հետո արագորեն չորանա և, վոր գլխավորն ե, չորանալուց հետո թանաքը ստանա վառ գույն և յերկար ժամանակ պահպանի իր գույնը։ Այս տեսակետից ամենալավը համարվում ե խիստ ուշ գույնի թանաքը։ Բոլորովին չի հանձնարարվում գրոշմի համար յեղած թանաքը և նման այլ թանաքներ։

2. Թանաքամանը անպայմանորեն պետք ե ունենա ծածկոց՝ փոշուց և այլ կեղտերից պահպանելու համար և շարունակ լիքը լինի թանաքով։ Անհրաժեշտ ե վոր թանաքամանը լինի գրողի աշ կողմը և վորքան կարելի յե մոտ դեպի իրեն։

3. Հանձնարարվում ե գործածել այնպիսի գրչակոթներ, վորոնք յերեք կողմից հատկածքներ ունենան։ Այս ձեր գրչակոթները հնարավորություն են տալիս գրողին գրչակոթը շարունակ բռնել ուղիղ գրությամբ, վորպիսի գեղքում նրա գրության

շարժումները լինում են ավելի աղաս և հսկատառուն։ Գրչակոթը պետք ե բռնել գերազանցապես միջին և բութ մատներով, վերեցից, ուղիղ գրությամբ, գրչակոթին հպելով ցուցամատը։ Զի թույատրվում ցուցամատը ուժեղ և այն ել կծկված գրությամբ հպել գրչակոթին։

4. Լավորակ գրության համար խոշոր նշանակություն ունի նաև համապատասխան գրչածայրերի զործածումը։ Պետք ե գործածել այնպիսի գրչածայրեր, վորոնք ունեն գնդիկածել վերջավորություն։ Այս տեսակետից հանձնարարվում ե «Առյուղ» Փաբրիկայի № 60, № 516 EF և № 510 EF գրչածայրերը։ Մասնավորապես հանձնարարվում ե «ինքնահոս գրիչ» գործածումը։ Գրագարանային ձեռացագրով գրելու համար բոլորովին չի հանձնարարվում «ոռնդո» կոչված գրչածայրերը։ Անհրաժեշտ է, վոր գրչածայրը պահպի շարունակ մաքուր գրությամբ։ Գրելուց հետո գրչածայրը պետք ե մաքուր կտորով։ Զի թույական գրության մեջ առաջանում ե փոփոխություն, վորը չի հոգնեցնում նրան։ Այսուամենայիվ, յերբ գրադարանավարը նկատում է, վոր յերկար գրելու հետեւանքով ձեռքը հոգնել ե, պետք ե անմիջապես զարպեցնի զրությունը և մի քանի ըսպեյով հանդատանա։ Աս անհրաժեշտ է թե՛ իր առողջության և թե՛ զրության վօրակի համար։

5. Ծծողական բոլորովին չի թույատրվում գործածել։ Գրելուց հետո գրքի քարտը պետք ե թողնել ինքն իրեն չորանա։ Գրության առողջապահության համար անհրաժեշտ է, վոր գրադարանավարը չգործածի շատ բարակ գրչակոթներ։ Ընդհանուրական որվա ընթացքում պետք ե գործածել մի քանի տարբեր հաստություն ունեցող զրչակոթներ։ Այս կերպ զրովի ձեռքի մկանների գրության մեջ առաջանում ե փոփոխություն, վորը չուտ չի հոգնեցնում նրան։ Այսուամենայիվ, յերբ գրադարանավարը նկատում է, վոր յերկար գրելու հետեւանքով ձեռքը հոգնել ե, պետք ե անմիջապես զարպեցնի զրությունը և մի քանի ըսպեյով հանդատանա։ Աս անհրաժեշտ է թե՛ իր առողջության և թե՛ զրության վօրակի համար։

ՏԱՐԵՐԻ ՅԵՎ ԹՎԱՆՇԱՆԵՐԻ ԶԱՓՍԵՐԸ


Տառերի և թվանշանների չափսերը վորոշելու համար նկատի յե ունեցվում կատալոգային քարտի միջազգային չափսի տողերի հեռավորությունն իրարից, վորը հավասար և ուղիղ վեցը միտեմեարի։ Բաժանելով այն յերեք հավասար մասի ստացվում է յերկուական միլիմետր յուրաքանչյուր մասում։ Սրանից ել պետք ե յենել վորոշելու գրադարանային ձեռացագրի տառերի և թր-

վանշանների յերկարությունը։ Այդ հաջողվ հայերեն վորքուտառերի բարձրության համար նկատի պետք է ունենալ յերեք դեպք։

ա) Այն տառերը, վորոնք գրվում են յերկու տողի մեջ (ա, ո, ս, ո և այլն) բարձրության համար պետք է ընդունել յերկու միլիմետր։

բ) Այն տառերը, վորոնք գրվում են յերեք տողի մեջ (բ, զ, դ, ե, զ, թ, պ և այլն) բարձրության համար պետք է ընդունել յերեք և կես միլիմետր։

գ) Այն տառերը, վորոնք գրվում են չորս տողի մեջ (ի, կ, լ, փ, փ, վ և այլն) տառի բարձրությունը պետք է լինի հինգ միլիմետր, ընդ վորում յերեք և կես միլիմետր տողից վերև, մեկ և կես միլիմետր տողից ներքեւ։ Իսկ ծ, ծ, տառերի բարձրությունը պետք է հավասար լինի յերեք միլիմետրի, «է»-տառի բարձրության համար պետք է ընդունել չորս միլիմետր, վորից յերեք և կես միլիմետր տողից վերև, կես միլիմետր տողից ներքեւ։ Պետք է հետևել այս չափսերի կիրառմանը, հակառակ պարագայում տողերի տառերը կարող են իրար հետ միանալ։ Մինչդեռ այս չափսերը պահպանելով տողերի միջև մնում է ուղիղ մեկ միլիմետր աղատ տարածություն (տես նկ. 2)։



Նկ. 2. Տառերի չափսերը կատալոգային քարտի 6 մմ. Հետավորություն ունեցող տողերի միջև (մեծացրած)


Փոքրատառերի լայնությունը հավասար պետք է լինի յերկու միլիմետրի, բացի ա, զ, դ, ե, լ, մ, պ, ո, վ, տ, փ, փ տառերից, վորոնց պետք է տալ յերեք միլիմետր լայ-

նություն։ Փոքրատառերից 1, յ, հ, և տառերի հորիզոնական դըների յերկարությունը պետք է լինի մոտ մեկ միլիմետր։

Մեծատառերի բարձրությունը պետք է վերցնել յերեք և կես միլիմետր, բացի է, Զ, Զ, Զ, Զ, Վ, տառերից վորոնց յերկարությունը պետք է լինի չորս և կես միլիմետր, ընդ վորում կես միլիմետրը տողից ներքեւ։ Մեծատառերի լայնությունը պետք է հավասար լինի յերեք միլիմետրի, բացի Գ, Գ, Թ, Փ, Խ, Ղ, Մ, Ռ, Վ, Ռ, Վ, Փ տառերից, վորոնց լայնությունը հավասար է չորս միլիմետրի։

Թվերի բարձրությունը պետք է լինի յերեք միլիմետր, լայնությունը՝ յերկու միլիմետր։

Առանձին տառերի հեռավորությունը բառերի մեջ պետք է ընդունել մոտ մեկ միլիմետր, նախաղասության մեջ բառերի հեռավորությունն իրարից՝ չորս միլիմետր, նախաղասությունների



Նկ. 3. Տառերի և թվանշանների բարձրությունն և լայնությունը միլիմետրացնեցի վրա (մեծացրած)

Հեռալորությունն իրարից նույնպես չորս միլիմետր ընդ վորում
հեռավորությունը պետք է վերցնել կետագրության նշանից :
Գրադարանավարը իր պրակտիկ աշխատանքներում պետք է հետեւի պահանջվող այս չափսերին, հակառակ դեպքում կիսախ-
տըսի քարտի պարզությունը :

ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՐԵՐԸ ԳՐԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՎԱԳՆԵՐԸ

Գրադարանային ձեռացագրով՝ զրելիս պետք է աշխատել միանդամից դրել ամբողջ տառը, առանց ընդհատելու այն; Այդ պահանջվում է նրա համար, վոր ինչպես գրադարանային փորձը ցույց է տվել, յերբ տառը միանդամից է դրվում պահպանվում է նրա միաձեռությունը և արագ է կատարվում: Ինչպես հիմա կտեսնենք, հայերեն տառերի մեծ մասը հնարակոր և միանդամից գրել, սակայն կան տառեր, վոր պետք է զրել յերկու և ավելի նվազներով (տես նկ. 4, 5, 6):

Փ Ո Ք Ռ Ա Տ Ա Ռ Ե Ր

ա— Գրվում է մեկ նվազով, միանդամից: Պետք է սկսել զրել ձախից, առաջին ուղղահայաց գծից, վերեից ներքի առանց ընդհատելու շարունակվում է տառի մյուս մասերը: 1 նվազ: Բարձր. 2 մմ., լայն. 3 մմ.

բ— Սկսվում է ներքից վերև: Առաջին նվազով դրվում է ուղղահայաց գիծը, վորք վերեի մասում տրվում է կիսաշրջան: Յերկրորդ նվազով դրվում է հորիզոնական գծիկը մեկ միլիմետր յերկարությամբ: 2 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 2 մմ.

գ— Սկսում է հորիզոնական գծից, աջից ձախ, բարձրանում է վեր գծելով շրջան և ապա տարվում է ուղղահայաց գիծը: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 3 մմ.

դ— Սկսվում է ձախ ուղղահայաց գծից ներքից վերև, ապա կիսաշրջան կազմելով իջեցվում է յերկրորդ ուղղահայաց գիծը: Հետեւյալ նվազով տարվում է հորիզոնական գիծը մեկ միլիմետր յերկարությամբ: 2 նվազ: Բարձ. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 3 մմ.

ե— Սկսվում է վերեից ներքի առանց ընդհատելու պետք ե զրել տառի յերկրորդ մասը ներքից վերև մոտ մեկ միլիմետր յերկարությամբ: Հետեւյալ նվազով գրվում է հորիզոնական գիծը 2 մմ. բարձրությունից: 2 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 2 մմ.

զ— Սկսվում է առաջին ուղղահայացից, վերևից, առանց ընդհատելու գրվում է մնացած մասը, ներքեռում դեպի աջ տարվով փոքրիկ գծիկ մեկ միլիմետրի սահմանում: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 3 մմ.

է— Սկսվում է վերեից ներքել: Յերկրորդ նվազով տրվում է հորիզոնական գիծը: 2 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 2 մմ. տողից վերև, ½ մմ. տողից ներքի, լայն. 2 մմ.

ը— Սկսվում է ներքից, հորիզոնական գծից, աջից դեպի ձախ, ապա տառանց ընդհատելու գրությունը բարձրացվում է վերև դրվում է տառի մնացած մասը: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 2 մմ.

թ— Սկսվում է ձախ ուղղահայաց գծից ներքից վերև, առանց ընդհատելու շարունակվում է տառի մնացած մասը: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 3 մմ.

ժ— Սկսվում է վերեից, ուղղահայացից, այնուհետեւ գիծը տարվում է դեպի ձախ, կիսաշրջան գծելով հորիզոնական գծով միացվում է ուղղահայաց գծին: Հորիզոնական գիծը մոտ 1 միլիմետրի չափ պետք է անցնի ուղղահայաց գծի այն կողմը: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., լայն. 3 մմ.

ի— Սկսվում է ձախ ուղղահայաց գծից, վերևից ներքի, այնուհետեւ նույն ուղղահայացով գրիչը մոտ 3½ միլիմետր բարձրանում է և դրվում է տառի մնացած մասը: 1 նվազ: Բարձր. 5 մմ., վորից 3½ մմ. տողից վերև, 1½ մմ. տողից ներքի, լայն. 2 մմ.

լ— Սկսվում է վերեից ներքի, ապա ներքեռում մեկ միլիմետր դեպի աջ: 1 նվազ: Բարձր. 3½ մմ., վորից 1½ մմ. տողից ներքի, լայն. 2 մմ.

լի— Սկսվում է վերեից ներքի, ապա նույն ուղղահայացով բարձրանում է գրիչը և մոտ 3½ միլիմետր բարձրության վրա գրվում է տառի մնացած մասը: 1 նվազ: Բարձր. 5 մմ., վորից 3½ մմ. տողից վերև, 1½ մմ. տողից ներքի, լայն. 3 մմ.

ծ — Սկսվում է վերեից, զրիչը թեքվելով դեպի աջ իջնում է ներքեւ, կիսաշրջան տալով բարձրանում է վեր և մոտ 2 միլի-մետր բարձրության վրա հորիզոնական գծով միացվում է կոր դժին: Հորիզոնական գիծը մոտ մեկ միլիմետրի չափ պետք է անցնի կոր դժին կողմը: 1 նվազ: Բարձր. 3 մմ., լայն 2 մմ.

կ — Սկսվում է վերեից, առաջին ուղղահայացից: Տողի մոտ թեքվում է դեպի աջ կիսաշրջան կազմելով գրիչը բարձրանում է վեր 2 միլիմետր և ապա նույն գծի վրայով իջնում է ներքեւ տողից $1\frac{1}{2}$ միլիմետր ցած: 1 նվազ: Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև, լայն 2 մմ.

հ — Սկսվում է վերեից ներքեւ ապա դրիչը նույն ուղղահայացով բարձրանում է մոտ 2 միլիմետր, կիսաշրջան կազմելով իջնում է դեպի տողը: 1 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 2 մմ.

ճ — Սկսվում է վերեի թեք դժին, վորը պետք ունենա մոտ 1 միլիմետր յերկարություն, ապա դիմում շարունակվում է դեպի ձախ և դրվում է «6» թվանշանի ձեռվ, այսուհետեւ առանց լնդհատելու դրությունը գրիչը թեք դժով իջնում է դեպի տողը: 1 նվազ: Բարձր. 3 մմ., լայն. 2 մմ.

դ — Սկսվում է վերեից 2 միլիմետր բարձրությունից, վո-րից հետո գրիչը նույն գծով բարձրանում է և թեքվում դեպի աջ կիսաշրջան կազմելով իջեցվում է ուղղահայաց գիծը, ապա 1 միլիմետր յերկարությամբ այդ գիծը թեքվում է դեպի աջ: 1 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

ե — Սկսվում է վերեից անհան կարողություն տալով ի-ջեցվում է դիմում մինչև տողը: Այսուհետեւ առանց լնդհատելու դրությունը շարունակվում է դեպի աջ, առաջի վրա հորիզո-նական գծերով բարձրացվում է և միացվում թեք դժին: 1 նը-վագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն 2 մմ.

մ — Սկսվում դրվում է առաջին ուղղահայաց գիծը վե-րեից ներքեւ, առանց լնդհատելու դրությունը շարունակվում է յերկրորդ ուղղահայաց գիծը ներքեից վերև և ապա վերեւում տրվում է մեկ միլիմետր յերկարությամբ հորիզոնական գիծ դե-պի աջ: 1 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 3 մմ.

յ — Սկսվում է վերեից ներքեւ ապա հորիզոնական գիծ մոտ 1 միլիմետր յերկարությամբ դեպի ձախ: 1 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

ն — Սկսվում է վերեից, աջից ձախ: Սկսվում դրվում է մոտ մեկ միլիմետր յերկարությամբ կոր գիծ, ապա իջեցվում է ուղղահայաց մինչև տողը, վորից հետո առանց լնդհատելու շարունակվում է գրությունը «ս» տառի ձեռվ: 1 նվազ: Բար-ձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն 2 մմ.

շ — Գրվում է յերկու տողի մեջ: Սկսվում դրվում է կոր գիծ՝ ձախից աջ 2 միլիմետր յերկարությամբ, ապա գրիչը յետ և գառնում է կազմում և ավելի խոր կիսաշրջան՝ բացվածքը դեպի վեր: 1 նվազ: Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

ո — Սկսվում դրվում է առաջին ուղղահայացը վերեից ներքեւ, այսուհետեւ գրիչը բարձրանում է նույն ուղղահայացով և չհասած յերկրորդ միլիմետրին թեքվում է դեպի առուր անկյուն կազմելով գծում է յերկրորդ ուղղահայացը վերեից ներքեւ: 1 նվազ: Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

չ — Սկսվում է վերեից՝ գծելով բութ անկյուն տողի վրա, այսուհետեւ առանց լնդհատելու գրությունը շարունակվում է տողից ցած $1\frac{1}{2}$ միլիմետր և ապա նույնպիսի բութ անկյուն (ավելի մեծ) կազմելով վերջանում է տառի գրությունը: 1 նը-վագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.


պ — Սկսվում դրվում է «ս» տառի ձեռվ այն տարրերու-թյամբ, վոր յերրորդ ուղղահայացը շարունակվում է տողից ցած: 1 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 3 մմ.

ջ — Սկսվում է վերեից: Սկսվում դրվում է լատինական «S» տառը ներքեւ մասը անհան կորություն տալով, ապա վերեից նրան միացվում է յերկրորդ «S»-ը, վորը շարունակվում է տո-ղից ներքեւ բութ անկյուն կազմելով դեպի աջ: 2 նվազ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքեւ, լայն. 2 մմ.

ռ — Գրվում է «ս» տառի նման: Յերկրորդ ուղղահայացը շարունակվում է տողի վրա դեպի աջ մոտ 1 միլիմետր յերկա-րությամբ: 1 նվազ: Բարձր. 2 մմ., լայն. 3 մմ.

ս — Գրվում է «ս» տառի ձեռվ առանց յերրորդ ուղղա-հայացի: 1 նվազ: Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

վ — Գրվում է սկսվում «ս» տառի ձեռվ, ապա յերկրորդ ուղղահայացը բարձրանում է վեր և նույն ուղղահայացով իջ-նում է տեղից $1\frac{1}{2}$ միլիմետր ցած, վորից հետո տարվում է հորիզոնական գիծը դեպի աջ աջ մոտ 1 միլիմետր յերկարու-



Նկ. 4. Հայերեն այբուբենի տառերը գրելու յեղանակներն ու նվազները
(Ա-Զ)



Նկ. 5. Հայերեն այբուբենի տառերը գրելու յեղանակներն ու նվազները
(Ղ-Վ)

S ս ն ն

Ց յ ւ ւ

Ւ Փ ֆ Տ Տ

Նկ. 6. Հայերեն այբուբենի տառերը դրելու յեղանակներն ու նվազները
(Տ-Ձ)

Թյամբ: 1 նվագ: Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև,
1 $\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 3 մմ.

Ա— Գրվում ե սկզբում «Ա», ապա «Ա» տառի ձեռվէ:
1 նվագ: Բարձր. 2 մմ., լայն. 3 մմ.

Բ— Սկզբում ե վերևից ներքև: Սկզբում դրվում ե առաջին ուղղահայցը, ապա դրիչը նույն ուղղահայցով բարձրանում ե և գրվում ե յերկրորդ ուղղահայցը: 1 նվագ: Բարձր.
 $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 2 մմ.

Գ— Սկզբում գրվում ե «Ա» տառի ձեռվէ, ապա յերկրորդ ուղղահայցը շարունակվում ե տողից ցած, վորից հետո դեպի ձախ թեքվելով տրվում ե հորիզոնական դիմ 1 միլիմետր յերկարությամբ: 1 նվագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., վորից $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 2 մմ.

Դ— Սկզբում ե վերևից ներքեվ, ապա դեպի աջ ուղղահանական դիմ՝ մեկ միլիմետր յերկարությամբ: 1 նվագ:
Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

Վ— Գրվում ե «Վ» տառի ձեռվէ առանց ներքեսի հորիզոնականի, ապա առանց ընդհատելու գրությունը դրիչը բարձրանում է նույն ուղղահայցով վերև և գրվում ե տառի մնացած մասը: 1 նվագ: Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև, $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 3 մմ.

Շ— Սկզբում ե վերևից, աջ կողմից: Սկզբով չպետք ե կետ դնել: Հորիզոնական դիմ բարձրությունը տողից 2 միլիմետր: 2 նվագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 2 մմ.

Լ— Սկզբում ե վերևից ներքև: 1 նվագ: Բարձր. $3\frac{1}{2}$ մմ., լայն. 3 մմ.

Օ— Սկզբում ե ձախից աջ: 1 նվագ: Բարձր. 2 մմ., լայն. 2 մմ.

1 2 3 4 5
6 7 8 9 0
1 0

Նկ. 7. Թվանշանների և հայերեն այբուբենից հանված տառերի դրելու յեղանակներն ու նվազները

Փ— Սկզբում ե ներքեւից վերև, ապա դրիչը թեքվում է դեպի ձախ փոքրիկ կիսաշրջան տալով գրվում ե տառի մնացած մասը: 1 նվագ: Բարձր. 5 մմ., վորից $3\frac{1}{2}$ մմ. տողից վերև, $1\frac{1}{2}$ մմ. տողից ներքև, լայն. 3 մմ.

Բոլոր մեծատառերը զրվում են տողից վերև, բացի Զ, Է, Զ, Զ, Զ և Ք տառերից, վորոնց բարձրությունը հավասար պետք է լինի, ինչպես ասացինք 4 միլիմետրի, ընդվորում կես միլիմետրը տողից ներքև, իսկ լայնությունը հավասար պետք է լինի 3 միլիմետրի, բացի Գ, Դ, Խ, Ղ, Մ, Վ, Ռ, Փ, Փ տառերից, վորոնց լայնությունը հավասար է 4 միլիմետրի:

Մեծատառերի գրելու ձևը, բացի Ա, Զ, Հ, Զ, Ս, Յ, Յ, Ռ, Ռ, Ս, Ռ, Յ, Յ և Ք տառերից նույն է ինչ փոքրատառերինը:

Ա— Սկզբում զրվում է ինչպես «Ա» մեծատառը, վորից հետո աջ անկյան ներքեւի մասում ավելացվում է թեք դիմ: 2 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Զ— Գրվում է սկզբում «Հ» թվանշանի ձևով, սակայն առանց ներքեւի մասի: Յերկրորդ նվազով ավելացվում է ձախից աջ տառի ներքեւի մասը: 2 նվազ: Բարձր: 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն: 3 մմ.

Հ— Սկսվում է վերեից, թեք դիմ: Սկզբում զրվում է վերեի թեք դիմը 1 միլիմետր յերկարությամբ, ապա առանց ընդհատելու շարունակվում է տառի ներքեւի մասը, ընդվորում ներքեւի թեք դիմի յերկարությունը հավասար պետք է լինի 3 միլիմետրի: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Զ— Գրվում է «Հ» թվանշանի ձևով: 1 նվազ: Բարձր: 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն: 3 մմ.

Մ— Սկզբում զրվում է «Ա» մեծատառի ձևով, ապա առանց ընդհատելու տարվում է վերեի հորիզոնական դիմը 1 միլիմետր յերկարությամբ դեպի աջ: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 4, մմ

Յ— Գրվում է «Յ» թվանշանի ձևով այն տարրերությամբ, վոր ներքեւի կիսաշրջանը մի փոքր ավելի մեծ պետք է լինի քան վերեվինը: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Զ— Սկզբում զրվում է վերեի շրջանը, վորն սկսվում է ներքեւից վերե, ապա վերեւում շրջան կազմելով տարվում է այլ դիմ թեպի ձախ մինչև տողը: Յերկրորդ նվազով հատվում է այլ դիմը: Յեք դիմի աջ մասը մինչև վերեւի շրջանը: 2 նվազ: Բարձր: 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն: 3 մմ.

Պ— Սկզբում զրվում է փոքրատառ «Պ» տառի ձևով առանց հորիզոնական դիմի, վորից հետո տրվում է շրջանի միջնինքն յերեւում:

Ուղղահայացը վերեկից ներքեւ: Այլ ուղղահայացը մի փոքր յերեւար պետք է լինի քան առաջին ուղղահայացը: 2 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Զ— Գրվում է յերեւար նվազով: Սկզբում զրվում է տառի վերեի մասը փոքրատառ «Զ» տառի գլխի ձևով, այսինքն լատինական յերկու իրար հետ միացած «Տ» տառ, սակայն ավելի թեք և ավելի բացված: Հետեւար նվազով գրվում է տառի ներքեւի մասը ձախից աջ: 3 նվազ: Բարձր: 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն: 3 մմ.

Ո— Սկսվում է ձախ ուղղահայացից ներքեւից վերե, ապա կիսաշրջան տարվով ինցիզում է յերկրորդ ուղղահայացը դեպի տողը: Յերկրորդ նվազով տրվում է հորիզոնական դիմը մոտ 2 միլիմետր բարձրությունից: 2 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 4 մմ.

Ա— Սկսվում է ձախ ուղղահայացից վերեւից ներքեւ, ապա տողի վրա կիսաշրջան տարվով տարվում է յերկրորդ ուղղահայացը յացը ներքեւից վերե: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Տ— Սկսվում է վերեւից, աջից գեպի ձախ: Տառի վերեւի կիսաշրջանը մի քիչ փոքր պետք է լինի ներքեւի կիսաշրջանից: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Ր— Սկսվում է ձախ ուղղահայացից ներքեւից վերե, ապա առանց ընդհատելու դրությունը կիսաշրջան տարվով դրվում է տառի մնացած մասը: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Ց— Սկսվում է բացվածքի վերեւի դիմ, դեպի աջ կիսաշրջան կազմելով տարվում է դեպի վերև և ապա դրէչը թեքուելով դեպի ձախ, դրվում է տառի մնացած մասը: Վերեւի շրջանը փոքր պետք է լինի ներքեւի շրջանից: 1 նվազ: Բարձր: 3½ մմ., լայն: 3 մմ.

Փ— Սկսվում է ներքեւից վերեւ առանց ընդհատելու դրությունը գրվում է վերեւի շրջանը: Յերկրորդ նվազով տրվում հորիզոնական դիմը տողի վրա: 2 նվազ: Բարձր: 4 մմ., վորից ½ մմ. տողից ներքեւ, լայն: 3 մմ.

Համաձայն դիտական դրագարանների կատալոգից կանոնների դրէւրի նվազագրությունը պետք է կատարել այն ուղղագրությամբ, ինչ ուղղագրությամբ տպադրված է գրքի տիտղոսաթերթը: Նկատի ունենալով այս հանդամանքը այբուբենից հանդած «Է» և «Օ» տառերի գրելու ձևը նույնպես տրված

Ե ձեռնարկում, վորն անհրաժեշտ է զիտական գրադարաններում
հին ուղղագրությամբ գրքերի նկարագրության համար:

ԹՎԱՆՇԱԽՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՆՇԱԽՆԵՐԻ

ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Արարական բոլոր թվանշանները պետք է գրել մեկ նվազով,
առանց դրիչը հեռացնելու քարտից: Բոլոր թվանշանների բարձ-
րությունը համասար պետք է լինի 3 մմ., լայնությունը 2 մմ.

1 — Պետք ե սկսել գրել վերևից:

2 — Պետք ե սկսել գրել վերևից:

3 — Պետք ե սկսել գրել վերևից: Թվանշանի վերևի մասը
մի քիչ փոքր պետք է լինի ներքեւի մասից:

4 — Պետք ե սկսել աջից: Նախ պետք ե տանել հորիզոնա-
կան դիմում, ապա թեքել այն դեպի վեր և հետո իջեցնել ուղղա-
հայաց:

5 — Պետք ե սկսել աջից: Նախ պետք ե տանել վերևի հորի-
զոնական դիմում հետո մի փոքր իջեցնել ուղղահայաց և ասկա գծել
ձվաձև:

6 — Պետք ե գրել վերևից:

7 — Պետք ե գրել վերևից, ձախից: Սկսելով հորիզոնական
դիմում մի փոքր թեք իջեցնելում և թվանշանի բունը: Զպետք ե
դժիկով հատել թվանշանի բունը:

8 — Պետք ե գրել մեջտեղից, ընդ վորում վերևի ձվաձևը
պետք ե գրել ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ, իսկ
ներքեւի ձվաձևը սլաքի շարժման հակառակ ուղղությամբ: Թվա-
նշանի վերևի մասը մի քիչ փոքր պետք է լինի ներքեւի մասից:

9 — Պետք ե գրել ներքեւից:

0 — Գրվում ե այնպես, ինչպես «0» տառը, միայն 3 մմ.
բարձրությամբ:

№ (համար) — Գրվում ե մեկ նվազով լատինական N մեծա-
տառի ձեռվ: Պետք ե սկսել ձախից, ներքեւից բարձրացնել վերև
ուղղահայաց դիմ, ապա թեք իջեցնել ներքեւ մինչև տողը և հետո
նորից բարձրացնել վերև ուղղահայաց: Փոքրիկ զերոն ընդհան-
րապես չպետք ե գրել: Զպետք ե նույնպես նշանը հատել յերկու
գծիկներով: Բարձ. 3 մմ. լայն. 3 մմ.

§ (պարագրաֆ) — Պետք ե գրել վերևից, աջից վորպես միաց-
ված լատինական յերկու «S» տառ: Առաջին նվազով դրվում ե
վերևի «S»-ը, յերկրորդ նվազով դրվում ե ներքեւի «S»-ը: 2
նվազ: Բարձր. 3 մմ.

ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ԶԵՐԱՑԱԳՐԻ ՏԱՐԱԳՐԵՐԸ

Ա Բ Գ Դ Ե Կ Ը Ծ Ւ Խ Ծ Կ Կ Հ Ճ Ղ
Մ Յ Ա Ծ Ո Հ Ա Վ Ա Վ Ա Վ Կ Մ Ր Կ Վ Կ Ւ Ֆ

Հանդիսած գրառեր

Է Օ

Ա Բ Գ Դ Ե Զ Ը Ծ Ւ Խ Ծ Կ Կ Հ Ճ Ղ
Ո Ճ Մ Յ Ա Ծ Ո Հ Ա Վ Ա Վ Ա Վ Կ Մ Ր Կ Վ Կ Ւ Ֆ
Ի Մ Ք Ր Վ Ֆ

Հանդիսած գրառեր

Է Օ

թվանշաններ

1 2 3 4 5 6 7 8 9 0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԳԼՈՒԽԱ 8013 պատվեր 262, տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 8 մարտի 1939 թ. ստու-
րագրված և տպելու

«Հայկական ԽՍՀ ժողովումխորհի հրատարակչության
«Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան



NL0865926

9528/5

ԳԻՒԸ 1 Ա. 20 Կ.

Ա. ՎԱԲԱՅՆ
БИБЛИОТЕЧНЫЙ ПОЧЕРК
Եреван, Наркомпрос Арм. ССР. 1939.